ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5674-Ա «23» նոյեմբերի 2026 թ.

ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Հարութ Խաչատրյանի լիազորված անձ՝ Վարդան Խաչատրյանի 2026 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ Դ-116148-26 դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան իրականացվել է վարչարարություն:

2026 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ Դ-116148-26 դիմումի (այսուհետ՝ նաև Դիմում) առարկայի քննության կապակցությամբ 2026 թվականի նոյեմբերի 12-ին հրավիրվել են լսումներ, որին ներկայացել և մասնակցել է Հարութ Խաչատրյանի լիազորված անձ՝ Վարդան Խաչատրյանը:

Ուսումնասիրելով 2026 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ Դ-116148-26 դիմումը, դիմումի առկայի կապակցությամբ թիվ Դ-101147-26, թիվ Դ-125430-26, թիվ Դ-124696-26 դիմումներով ներկայացված ապացույցները, վարույթի շրջանակներում իրականացված լսումների վերաբերյալ 2026 թվականի նոյեմբերի 12-ի արձանագրությունը, գնահատելով ներկայացված պահանջին առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշման կայացման համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Դիմումով Հարութ Խաչատրյանի լիազորված անձ Վարդան Խաչատրյանը, հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ Դ-116148-26 դիմումում նշված փաստական հանգամանքները և ներկայացված ապացույցները, խնդրել է փոխհատուցել 2026 թվականի հուլիսի 20-ին Զաքյան փողոցի թիվ 4 հասցում կայանված՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «Н 901 ТН 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառ ընկնելու արդյունքում առաջացած վնասը, որը «Վարորդի պաշտպան խորհրդատվական և փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՎՊ-26-299-ԱՊ ապրանքագիտական

եզրակացության համաձայն՝ կազմում է 1.574.000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

2023 թվականի նոյեմբերի 17-ին տրված փոխադրամիջոցի գրանցման թիվ «99 58 879060» վկայագրի համաձայն՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «H 901 TH 193» հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է Հարութ Խաչատրյանի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՀՈԳՎ Կենտրոնական բաժնի պետի պարտականությունները կատարողին ուղղված՝ 2026 թվականի հուլիսի 30-ի զեկուցագրի համաձայն՝ 2026 թվականի հուլիսի 20-ին ստացված հաղորդման (գրանցման համար՝ 7493) կապակցությամբ այց է կատարվել Երևան քաղաքի Զաքյան փողոցի թիվ 4 հասցե, որտեղ Վարդան Խաչատրյանի հետ զրույցից պարզվել է, որ նշված շենքի բակում գտնվող ծառը, որն ըստ քաղաքացու եղել է փտած, ընկել է նույն բակում կայանված՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «H 901 TH 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա և վնասել այն:

«Վարորդի պաշտպան խորհրդատվական և փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 15-ին կազմված՝ թիվ ՎՊ-26-298-ՀՓ հետքաբանական (տրանսպորտային հետքաբանական) եզրակացության «4. Հետևություն» բաժնի համաձայն՝ ՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «H 901 TH 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա առկա՝ նույն եզրակացության մեջ նկարագրված հետքերն ու վնասվածքներն իրենց բնույթով, տեղակայումներով, առաջացման ուղղվածություններով և հատկանիշներով համապատասխանում են փորձաքննությանը ներկայացված պատահարի վայրի էլեկտրոնային լուսանկարներում, պատահարից հետո պատահարի վայրում կատարված տեսագրությունում և լուսանկարչական հավելվածում առկա՝ նույն եզրակացության 3.2 բաժնում նշված՝ ՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «H 901 TH 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառն ընկնելու հետևանքով առաջացած հետքերին ու վնասվածքներին և այդպիսիք կարող էին առաջանալ «Պատահարի հանգամանքները» բաժնում նշված ժամանակ և հանգամանքներում՝ ՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «H 901 TH 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառն ընկնելու հետևանքով, այն է՝ տեղի ունեցած պատահարի ու «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «H 901 TH 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վերը նկարագրված հետքերի և վնասվածքների միջև առկա է պատճառահետևանքային կապ (պատճառը ծառի ընկնելն է, հետևանքը՝ դրանից առաջացած հետքերն ու վնասվածքները):

«Վարորդի պաշտպան խորհրդատվական և փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 16-ին կազմված՝ թիվ ՎՊ-26-299-ԱՓ ապրանքագիտական եզրակացության «Հետևություն» բաժնի համաձայն՝ փորձաքննությանը

ներկայացված ՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «Հ 901 ԹՀ 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա առկա նկարագրված վնասվածքների հետևանքով պատճառված նյութական վնասի չափը, 2026 թվականի հուլիսի 20-ի դրությամբ, կազմել է շուրջ 1.574.000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

2026 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ Դ-101147-26 դիմումի կապակցությամբ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2026 թվականի հուլիսի 20-ին Կենտրոն վարչական շրջանի Զաքյան փողոցի թիվ 4 հասցեում Հարութ Կարենի Խաչատրյանին պատկանող «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «Հ 901 ԹՀ 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա տապալված կենսունակ թթենին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների կողմից մասնատվել և դուրս է բերվել տարածքից:

3. Որոշումն ընդունելու հիմնավորումները.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն, անդրադառնալով վնասի հատուցման օրենսդրական կարգավորումներին, ընդգծել է հետևյալը. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ): Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով: Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը

պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ: (տես՝ Նելլի Մկրտչյանի ընդդեմ «Երևան հյուրանոց» ԲԲԸ-ի թիվ ԵԿԴ/2600/02/10 գործով 04.10.2013 թվականի որոշումը):»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Դիմումով ներկայացված վնասի փոխհատուցման պահանջի հիմնավորվածության ապացուցման նկատմամբ կիրառվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին, մասնավորապես՝ արձանագրել է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման (տե՛ս, Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 2015 թվականի հուլիսի 17-ին կայացված որոշմամբ անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նշել է, որ ապացույցի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, ինչը կարող է պայմանավորված լինել ապացույցի կազմավորման բնույթով, աղբյուրով, արտահայտման ձևով և այլ գործոններով, հետևաբար անգամ ընդհանուր կարգով

գնահատումն անհրաժեշտ է իրականացնել այդ առանձնահատկությունների հաշվառմամբ: Նույն որոշմամբ անդրադառնալով փորձագետի եզրակացության, որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը առանձնացրել է այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը գտել է, որ փորձագետի եզրակացությունը վերաբերելիության առումով գնահատելիս՝ նախևառաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե փորձագետին առաջադրված հարցերը որքանով նշանակություն ունեն գործի լուծման համար, ապա միայն անդրադառնալ այդ հարցադրումների վերաբերյալ արված եզրահանգումներին, թույլատրելիության տեսանկյունից գնահատման ենթարկելիս՝ առաջնահերթ կարևորվում է փորձաքննությունն իրականացնող անձի որակավորումը և ձեռնհասությունը, արժանահավատության տեսանկյունից գնահատելիս՝ պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը թիվ ԵԷԴ/1661/02/19 քաղաքացիական գործով 2013 թվականի հոկտեմբերի 4-ին կայացված որոշմամբ անդրադառնալով փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությանը, նշել է հետևյալը. «Փորձագետի հետևությունների ձևը չի որոշում եզրակացության դերը և տեղն ապացուցման պրոցեսում: Հետևության ձևը (հավանական կամ կատեգորիկ) և փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունն այն երկու բաղադրամասերն են, որոնք հնարավոր չէ տարանջատել: Ոչ հավանական եզրակացությունն ինքնին և ոչ էլ եզրակացության մեջ նշված տվյալներն առանձին վերցրած չունեն ապացուցողական նշանակություն. այդպիսին չեն համարվում նաև հիպոթետիկ եզրակացության համար հիմք հանդիսացող տվյալները: Հավանական հետևությունների թվից, որքան էլ որ դրանք շատ լինեն, չի առաջանում հավաստի և իրական եզրակացություն. հավանական հետևությունների քանակը չի ավելացնում փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը:

Հետևաբար փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց:»:

«Վարորդի պաշտպան խորհրդատվական և փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՎՊ-26-299-ԱՓ ապրանքագիտական եզրակացության 5-րդ էջում փորձագետը նշել է, որ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «Н 901 ТН 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա նկարագրված վնասվածքների վերականգնման աշխատանքների ընդհանուր շուկայական արժեքը տվյալ դեպքում

որոշվել է մի շարք բաղկացուցիչների հանրագումարից, որոնք են՝ փոխարինման ենթակա պահեստամասի, վերանորոգման ընթացքում օգտագործվող հիմնական և օժանդակ նյութերի և վերանորոգման ու փոխարինման աշխատանքների շուկայական արժեքները, ինչպես նաև, որպես նորմատիվ, չերևացող, չհայտնաբերված, չնախատեսված արատների վերացման հետ կապված ծախսերը: Դրանց գնահատումը փորձագետը կատարել է կիրառելով գնահատման համեմատական և ծախսային մեթոդները՝ հաշվի առնելով նույնանման ավտոմեքենաների պահեստամասերի վաճառքի առաջնային շուկայում (քանի որ փորձագետի կողմից ՀՀ ներքին շուկայում փորձաքննության օբյեկտ հանդիսացող ավտոմեքենայի վնասված և փոխարինման ենթակա դիմապակուն նույնանման օգտագործված վիճակում գտնվող դիմապակիների վաճառքի վերաբերյալ համեմատական ելակետային տվյալներ չեն հայտնաբերվել, հետևաբար վերջինիս շուկայական արժեքը պարզելու համար հիմք է հանդիսացել «Ավանգարդ Մոթորս» փակ բաժնետիրական ընկերությունում առաջարկվող նոր գործարանային արտադրության դիմապակու գինը) և ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ու վերանորոգման համակարգում գործող շուկայական արժեքները, որոնց առանձին-առանձին ընդհանուր շուկայական արժեքները, ըստ փոխարինման ենթակա պահեստամասի, վերանորոգման ընթացքում օգտագործվող հիմնական և օժանդակ նյութերի և փոխարինման ու վերանորոգման աշխատանքների, ներկայացվել են եզրակացության աղյուսակ 1-ում, աղյուսակ 2-ում և աղյուսակ 3-ում՝ նկատի ունենալով ավտոմեքենայի տեխնիկական վիճակն ու մաշվածությունը:

2026 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՎՊ-26-299-ԱՓ ապրանքագիտական եզրակացության աղյուսակ 1-ում, որպես փոխարինման ենթակա պահեստամաս, նշվել է «Mersedes-Benz V 250 D» մակնիշի ավտոմեքենայի դիմապակին, որի շուկայական արժեքը գնահատվել է 395.000 (երեք հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ, աղյուսակ 2-ում օգտագործվող անհրաժեշտ նյութերի (ներկ, նախաներկ, մածիկ, հղկաթուղթ, լուծիչ, լաք և այլ նյութեր) արժեքը գնահատվել է 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, աղյուսակ 3-ում նկարագրվել են փոխարինման և վերանորոգման աշխատանքները, որոնց ընդհանուր արժեքը գնահատվել է 1.070.000 (մեկ միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Վարույթի լսումների ընթացքում Վարդան Խաչատրյանը պարզաբանել է, որ 2026 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՎՊ-26-299-ԱՓ ապրանքագիտական եզրակացության աղյուսակ 3-ում, որպես փոխարինման և վերանորոգման աշխատանքների արժեք, գնահատված 1.070.000 (մեկ միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարը բացի աշխատանքների արժեքից ներառում է նաև նյութածախսը, մասնավորապես բրոնապատ թաղանթի արժեքը, որը կազմում է մոտավորապես 400.000-500.000 (չորս հարյուրից հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2026 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՎՊ-26-299-ԱՓ ապրանքագիտական եզրակացության աղյուսակ 3-ում նկարագրված աշխատանքների նկարագիրը պարունակում է նաև թաղանթապատում կատարելու աշխատանքները՝ ներառյալ

անհրաժեշտ նյութերի արժեքները, մինչդեռ փորձագետի կողմից կատարված հաշվարկներից պարզ չէ, թե իրականում որքան է կազմում փոխարինման ենթակա թաղանթի արժեքը, ինչ ելակետային տվյալների հիման վրա է այն հաշվարկվել և ինչ մեթոդ է կիրառվել: Ընդ որում՝ նշված եզրակացությունից պարզ չէ, թե ավտոմեքենայի թաղանթապատման համար անհրաժեշտ նյութը՝ թաղանթը, փորձագետը դիտարկել է որպես փոխարինման ենթակա մաս, թե վերանորոգման համար անհրաժեշտ նյութ, քանի որ այն ներառված չէ ինչպես աղյուսակ 1-ում, այնպես էլ աղյուսակ 2-ում, իսկ աղյուսակ 3-ի բովանդակությունից պարզ չէ, թե 1.070.000 (մեկ միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարից որքանն է կազմում անհրաժեշտ նյութերի արժեքը, որն է դրանց հաշվարկման մեթոդը և ինչ ելակետային տվյալների վրա է այն հիմնված, ինչպես նաև պարզ չէ, թե ինչով է պատճառաբանվում դրանք աշխատանքների արժեքի հետ համատեղ ներկայացնելն այն պարագայում, երբ առանձին աղյուսակով ներկայացվել է օգտագործվող անհրաժեշտ նյութերի արժեքը:

Որպես 2026 թվականի հուլիսի 20-ին Զաքյան փողոցի թիվ 4 հասցում կայանված՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «Н 901 ТН 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառ ընկնելու արդյունքում առաջացած վնասի չափը հիմնավորող ապացույց՝ ներկայացվել է «Վարորդի պաշտպան խորհրդատվական և փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՎՊ-26-299-ԱՓ ապրանքագիտական եզրակացությունը, որի ապացուցողական նշանակությունը վերը մեջբերված նախադեպային որոշումների մեջ արտահայտված դիրքորոշումներից ելնելով գնահատելիս, կարելի է փաստել, որ այն չի հանդիսանում նկարագրված պատահարի արդյունքում նշված ավտոմեքենան վնասվելու հետևանքով սեփականատիրոջը պատճառված վնասի չափը որոշող և ապացուցող եզրակացություն, քանի որ չի պարունակում օգտագործման ենթակա նյութերի, մասնավորապես՝ ավտոմեքենայի թաղանթապատնման համար անհրաժեշտ նյութերի արժեքի և այն որոշելու ելակետային տվյալների, կատարված հաշվարկի մեթոդների ու դրանց ընտրության վերաբերյալ պատճառաբանված փաստարկներ, ինչով պայմանավորված՝ նշված եզրակացությունը գնահատվում է ոչ արժանահավատ և ոչ հավաստի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի, որ իրականացված վարչարարությամբ չի հիմնավորվել 2026 թվականի հուլիսի 20-ին Զաքյան փողոցի թիվ 4 հասցում կայանված՝ «Mersedes-Benz V 250 D» մակնիշի «Н 901 ТН 193» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառ ընկնելու արդյունքում առաջացած վնասը 1.574.000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ կազմելու հանգամանքը, ինչով պայմանավորված չի ապացուցվել նկարագրված պատահարի և 1.574.000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ գումարի չափով վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչպես նաև նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1661/02/19 քաղաքացիական գործով 2013 թվականի հոկտեմբերի 4-ի և թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 2015 թվականի հուլիսի 17-ի

նախադեպային որոշումներով արտահայտված եզրահանգումների համատեքստում և նկարագրված պատահարի հետևանք հանդիսացող վնասի չափը որոշելու իմաստով «Վարորդի պաշտպան խորհրդատվական և փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՎՊ-26-299-ԱՓ ապրանքագիտական եզրակացությունը ապացուցողական նշանակություն չունի և գնահատվում է որպես ոչ արժանահավատ ապացույց, ուստի հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ հոդվածների դրույթները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Երևանի քաղաքապետարան հասցեագրված՝ Հարութ Խաչատրյանի լիազորված անձ՝ Վարդան Խաչատրյանի 2026 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ Դ-116148-26 դիմումով ներկայացված՝ վնասի փոխհատուցման պահանջը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ